

«ՈՒՐԱՐՏՈՒ»-Ի ՆԱԽԱՏԱՐԱԾՔԸ

Լ. Փ. ՇԱՀԻՆՅԱՆ

Շուրջ 100 տարի ուրարտագիտության տասնյակ հիմնահարցեր ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են և, այդուհանդերձ, շարունակում են մնալ շուրջված: Դրանցից մեկն էլ առաջադրված հիմնահարցն է, որին վերջերս անդրադարձել է Մ. Կատվալյանն իր «Ուրարտու» աշխարհի» բնօրրանի տեղորոշման շուրջ» հոդվածում¹:

Հենց սկզբում հեղինակը ներկայացնում է «Ուրարտու»-ի բնօրրանի մասին նախորդ կարծիքները, դրանք բնորոշում որպես «խոտոր տեղորոշումներ» (էջ 91), բացի Մ. Նիկոլսկու կարծիքից, և նախապատրաստում է իր փաստարկումները: Օրինակ, հոդվածագիրը ծանոթացնում է Մ. Բրոսսեի այն տեսակետին, ըստ որի, Ուրարտուի բնօրրան համարվել է Վան քաղաքը՝ իր մերձակայքով, և «Ավանդության ուժով այդ տեսակետն անառակելիորեն կամ մասնակի փոփոխմամբ որգեգրեցին նաև խորհրդային արևելագետները» (էջ 90): «Այսպես, — շարունակում է հեղինակը, — Բ. Ռ. Պիոտրովսկին գրում է, որ Ուրարտուի սկզբնագույն տարածքը գտնվում էր լեռնային տեղանքում, Վանա լճից հարավ և հարավ-արևելք, հավանաբար, Մեծ Զավ գետի վերին հոսանքի շրջանում: Շատ հավանական է, որ այն ընդգրկում էր նաև Վանա լճի շրջանը» (ն. տ.): Իսկ Գ. Ա. Մելիքիշվիլին «ուրարտական ցեղերի քաղաքական և կրոնա-մշակութային կյանքի հնագույն կենտրոնը» գետնադրում է Մեծ Զավ գետի միջին հոսանքի շրջանում» (ն. տ.): Հեղինակը տեղեկացնում է նաև, որ Հ. Մանտալճյանի կարծիքով «Մ. թ. ա. 9-րդ դարի առաջին կեսին Ուրարտու «աշխարհը» դեռևս ամփոփվում էր Բարձր Հայքի Կարնո գավառի տարածքում» (էջ 91), «իսկ ուսումնական առումով արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին... Ուրարտու «աշխարհի» բնօրրանը աներկբայաբար (ընդգծումը մերն է — Լ. Շ.) մատնանշում էր Արարատյան դաշտում, որ այս նույն կարծիքն է արտահայտել նաև խորհրդային արևելագետ է. Ա. Գրանտովսկին» (ն. տ.):

Հոդվածագիրն արժանին հատուցելով սույն ծանոթագրությունների համար, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ նա հարցի պատմությունը ներկայացրել է խիստ մակերեսորեն, թերի և թերություններով: Նախ, հանգամանորեն չի ներկայացված հարցի պատմությունը, ցույց չի տրված, թե ինչու է մերժվել այս կամ այն կարծիքը և ինչու է ընդունվել կամ չի ընդունվել մեկ ուրիշը: Ամենակառուցողը՝ չեն հստակված կարծիքները և չեն քննարկված դրանց հիմքերը: Այսպիսով, չի ցուցաբերված գիտաքննական մոտեցում:

Երկրորդ՝ իրարից էականորեն տարբեր երեք կարծիքներ՝ Մ. Բրոսսեինը, Բ. Պիոտրովսկունը և Գ. Մելիքիշվիլունը, արհեստականորեն համահարթվել և ներկայացվել են որպես մեկը, տարբերությունները ընդունվել որպես «մասնակի փոփոխումներ»: Այնինչ, պետք էր հստակ տարբերակել և ընդգծել, որ Մ. Բրոսսեի և այլոց կարծիքը այլ է՝ Վան քաղաքը և մերձակա շրջանները Ուրարտուի բնօրրան, Բ. Պիոտրովսկունը այլ՝ Մեծ Զավ գետի վերին հոսանքի շրջանում կամ Վանա լճից հարավ և հարավ-արևելք, Գ. Մելի-

1. Մ. Ա. Կատվալյան, Ուրարտու «աշխարհի» բնօրրանի տեղորոշման շուրջ (տե՛ս Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1992, № 1, էջ 90—102; Այսուհետև մեջբերումներն էջերի կտրված բնագրին կից):

քիշվիրունը այլ՝ Մեծ Զավ գետի միջին հոսանքի շրջանում, որ սրանք բնավ էլ «մասնակի փոփոխումներ» չեն:

Երբորդ՝ հողվածի շարահարանքից տպավորություն է ստեղծվում, որ Ուրարտուի բնօրրանի հարցում գոյություն ունի ընդամենը երեք կարծիք՝ Մ. Բրոսսեինը և նրա համախոհներինը, Հ. Սանտալձյանինը և Մ. Նիկոլսկուները: Այնինչ, նույնիսկ հողվածի ծառայողություններով դրանք հիմնված են:

Չորսորդ՝ կա շատ կառուցողի կարծիք ևս՝ վեցերորդը, որը, պարզապես, անտեսված է հողվածում: Ըստ այդմ՝ Ուրարտուի բնօրրանը Մեծ Հայքի Կորճայք, ավելի վաղ՝ Կադմեա Տուն նահանգի երբեմնի Արարադա երկիրն է՝ անմիջապես սահմանակից Ասորեստանին:

Հինգերորդ՝ հիմնականում անտեսված են նաև, այսպես ասած, «մերժելի» կարծիքների փաստարկում-հիմնավորումները (բացի երկուսից, որոնց կանգնեցրել են իսկ դրանք, ըստ հողվածագրի, բոլոր այն կարծիքներն են (վերը նշված կամ չնշված), ըստ որոնց Ուրարտուի բնօրրանը զետեղվում է Վան քաղաքի մերձակայքում կամ, մանավանդ, Վանա լճից հարավ:

Արդ, ո՞րն է Մ. Կատվալյանի կարծիքը. «Սկզբնաղբյուրներում պահպանված վերահիշյալ տեղեկությունները միահամուռ նախատեսում են, — գրում է նա, — որ Ուրարտու «աշխարհի» բնօրրանը թե՛ իր զբաղեցրած տարածքով և թե՛ անվանումով միանգամայն նույնանում է Արարատ-Այրարատ «աշխարհին» (էջ 102)»:

Այժմ տեսնենք, թե Մ. Կատվալյանը ինչպե՞ս է հանգել նման վճռական եզրակացության կամ ինչպե՞ս է, որ նախորդ ուսումնասիրողները (Բ. Պրոտորովսկի, Գ. Մելիքիշվիլի և ուրիշներ) Ուրարտուի բնօրրանը զետեղել են Վանա լճի հարավում կամ հարավ-արևելքում, իսկ Մ. Կատվալյանը՝ նույն լճի հյուսիսում:

Նախապես ասենք, որ այս «ինչու»-ների պատասխանը կապված է Ասորեստանի տիրակալ Սալմանասար Ա-ի (1274—1245 թթ.)՝ Աշշուր քաղաքում թողած արձանագրության հետ, որի համապատասխան հատվածը բերել է նաև Մ. Կատվալյանը (էջ 91): Ըստ Արձանագրության, Սալմանասար Ա-ն իր թագավորության առաջին իսկ տարում արշավել է իրենից ապստամբած «ուռա-առիներին» դեմ, հաղթել նրանց զորքերին և երեք օրում նվաճել նրանց ութ երկրներ՝ Խիմմե, Ուատկուն, Մաշգուն, Սալուա, Խալիա, Լուխա, Նիլիպախի, Զինգուն, 51 բնակավայրերով, որոնք գտնվում են «ամուր քեռաքաներում»: Արշավանքը նկարագրելիս, Սալմանասարը հայտնում է նաև Արիմու քաղաքի գրավման ու ավերման մասին, իսկ հատվածի վերջում ավելացնում. «Այդ ժամանակ (տվյալ արշավանքի—Լ. Շ.) ես ողջ Մուցրա երկիրը խոնարհեցրի տիրոջս՝ Աշշուրի ոտքերի առջև»² (ընդգծումը մերն է—Լ. Շ.):

Հենվելով արձանագրության վերոնշյալ տվյալների, ինչպես նաև զուգահեռ այլ տեղեկությունների վրա, նախորդ համարյա բոլոր ուսումնասիրողները «Ուրուատրի»-ն նույնացրել են «Ուրարտու» անվան հետ՝ համարելով վերջինիս նախաձևը և տեղադրել Վանա լճից հարավ կամ հարավ-արևելք՝ որպես Ուրարտուի նախատարածք (բնօրրան), միաժամանակ նույն արշավանքի առիթով հիշված Մուցրա (Մուսրա) երկիրը նույնացրել Ուրարտուի սրբավայր-կենտրոն Մուսասիր-Մուցացիքի հետ:

² Հնարավոր թյուրիմացությունից խուսափելու համար ասենք, որ Կադմեա Տուն նահանգի Արարադա երկիրը և հողվածագրի նշած Արարատ-Այրարատ «աշխարհը» Մեծ Հայքի բոլորովին տարբեր տարածքներ են, մեկը Վանա լճից հարավ՝ սահմանակից Ասորեստանին, մյուսը նույն լճից հյուսիս՝ Արաքս գետի հովտում:

³ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 14:

⁴ Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 145-146.

Մ. Կատվալյանը, սակայն, գտնում է, որ «Ուրուարի» և «Ուրարտու» անվանումների նմանությունը սոսկ «հնչյունական», «ձևական» բնույթ ունի, որը «դալթակղել» «հրապուրել է» գիտնականներին և տարել խոստոր» ճանապարհով, որ «Ուրուարի» բոլորովին էլ կապ չունի «Ուրարտու» հետ և պետք չէ փնտրել Հայկական լեռնաշխարհում (էջ 51, 94), իր այս մտքերը նա հիմնավորել է «Ուրուարի»-ի՝ վերը նշված տեղավայրերի այլ տեղագրումներով (բոլորն էլ, իրոք, Հայաստանից դուրս) և եզրակացրել. «Այսպիսով, սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրումներն ու վերլուծումները հավաստում են, որ ասորեստանյան արձանագրություններում «Ուրուարի» կամ «Ուրարի» հորջորջվող լեռներկրներն ու բնակավայրերը ստույգապես տեղորոշվում են Կիլիկյան Տավրոսի լեռնաբազուկներ Ամանոսի և Անտիտավրոսի միջնատարածքում, ուստի դրանք չեն կարող նույնանալ Հայկական լեռնաշխարհում տեղորոշվող Ուրարտու «երկրին» (էջ 93—94)։ Նշենք նաև, որ արձանագրությունում հիշված Մուարու (Մուցրու) երկիրն էլ, ըստ Մ. Կատվալյանի (նաև ըստ այլոց), Եգիպտոսն է, իսկ Արինու բաղաբը պետք է լեռնաշխարհում մասնաճիւղ-կիցուվատնա երկրում՝ երբեմնի Սիսա կոչվող լեռան ստորոտին, նույնացնելով Մուրշիլ Բ թագավորի (1345—1306 թթ.) հիշած Արունա բերդաքաղաքի հետ (էջ 92—93)։

Արդ, պատմագիտության մեջ տեղ գտած այս հակադիր կարծիքները առավել տեսանելի դարձնելու նպատակով, անհրաժեշտ համարեցինք իմի բերել և ներկայացնել աղյուսակի տեսքով։ Ի դեպ, աղյուսակում «ընդունված և չընդունված տեղագրումներ» նշումները ինչ-որ չափով պայմանական են, արտացոլում են պատմագիտական արդի պատկերացում-ընկալումները և առանց հանգամանալի բնութայն լուսնի քննադրող նպատակ կամ նշանակություն։ Տե՛ս աղյուսակը։

Ինչպես տեսնում ենք, ըստ «ընդունված տեղագրումների» Սալմանասար Ա-ի հիշած «Ուրուարի»-ական ութ երկրները զետեղված են կամ ենթադրված խիստ սահմանափակ տարածքում՝ Նիբուր կամ Ջուդի-դաղ (երբեմնի՝ Արարադ) լեռան շրջակայքում, կամ ոչ հեռու նրանից։ Փաստորեն, ըստ այդմ 8 երկրներից 6-ը ալդտեղ են տեղադրված, այսինքն՝ Մեծ Հայքի Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգի ներքին Կորդրիք, ավելի վաղ՝ Տմորիք, շատ ավելի վաղ՝ Արարադա երկիր կոչված գավառում, որն անմիջապես սահմանակից էր Ասորեստանին։ Այս կերպ ասած՝ Նինվեից դեպի հյուսիս տանող երթուղին Ասորեստանի սահմանից անմիջապես մտնում էր Արարադա երկիրը։ Ահա թե ինչու, մեր կարծիքով, «ընդունված տեղագրումները» առավել համոզիչ են երևում, քան «չընդունվածները», մանավանդ որ դրանք հիմնավորվում-հաստատվում են Սալմանասար Ա-ի նույն արձանագրության և նույն հատվածի գուգահեռ այլ տեղեկություններով։ Ընդհանուր համար, թե ինչ են լեռնաշխարհում գուգահեռ տեղեկությունները, նորից դիմենք Սալմանասար Ա-ի արձանագրության տվյալ հատվածին. «Երբ Աշշուրը՝ տերս, որպեսզի նրան երկրպագեն, Սևագուխներին ղեկավարելու համար օրինավոր կերպով ինձ ընտրեց և տվեց գայիսոն, զենք և գավազան, պարգևեց ինձ տիրապետության օրինական թագը, այն ժամանակ՝ իմ գահակալության տարին, ուրուարիները ըմբոստացան իմ դեմ։ Ձեռք կարկառեցի Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին, գորհեա հավաքեցի և նրանց ամուս լեռնաշխարհները ես բարձրացա։ Խիմմե, Ուատկուն, Մազգուն (նաև՝ Բարգուն—Լ. Շ.), Սալուա, Խալիլա, Լուխա, Նիլիպախի և Զինգուն՝ նրանց ութ երկրներին և նրանց աշխարհագրերին ես հաղթեցի։ Նրանց 51 ֆաղաֆները (բնակավայրերը—Լ. Շ.) քանդեցի, այրեցի, նրանց ռազմավարը, նրանց ունեցվածքը հափըրտակեցի, բոլոր ուրուարիներին երեք օրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշշուրի ոտքերի (առաջ)։ Նրանց ընտրյալ սերունդը բռնեցի, ծառայության և իմ աշխատանքի համար վերցրի, լեռների ծանր հարկը նրանց վրա հավիտյան դրի։ Արինու ֆաղաֆը՝ լեռան վրա ամրացված, որ նախապես ընդվզել, արհամարհել էր Աշշուր աստծուն, ես այդ քաղաքը Աշշուրի և մեծ աստվածների՝ տերերիս օգնությամբ հաղթեցի, ավերեցի, մոխիր ցանեցի վրան, (իսկ)

Սայմանաւար Ա-ի ճիշտ «ուրուարտի»-ական երկրների
տեղագրումներ՝ ըստ հակադիր կարծիքների*

	Երկրանուն	Հնդունված տեղագրումներ	Չընդունված տեղագրումներ
1	Խիմն	Նույնացվում է այժմյան Տխոմի հետ-Վանա լճից հարավ-արևելք. Ջուլամերկից 30 կմ հարավ, այսինքն՝ ղևտեղվում է Մեծ Հայքի Կորճայք նահանգում:	Խիմովա երկրի հետ-Կուէ (Կիլիկիա) երկրամասում՝ Լեոնային Կիլիկիայի և Կապադովկիայի միջև:
2	Ուատկուն	Տեղագրվում է Նիրուր կամ Ջուդի-դադ (երբեմնի Աւարադ) լեռան մոտ, Տիգրիս և Վերին Ջաբ գետերի միջև: Այսինքն՝ Կորճայք նահանգի ներքին Կորգրիք կամ Տմորիք գավառում:	
3	Բարգուն (Մաշգուն)	Ենթադրվում է Խիմնի (այժմյան Տխոմի) հարևանությամբ, Ջուլամերկից 30 կմ հարավ, Այսինքն՝ Կորճայք նահանգում:	Բարադա երկրի հետ-Կիցովատնա երկրամասի հարավ-արևելյան սահմանում՝ Ամանոսի լեռների շրջանում:
4	Ուալուա	Հավանական նույնացում այժմյան Առ-լ-լի հետ՝ Նիրուր-Ջուդի-դադ (երբեմնի՝ Աւարադ) լեռան արևելյան կողմում, Կումադի և Մեխրի մարզերի միջև:	Շալիյա բերդաքաղաքի հետ՝ Կումամանու-Կիցովատնա երկրում, Ախսա լեռան ստորոտին՝ ըստ Մուրշիլ Բ-ի տարեգրության:
5	Խալիլա	Ենթադրվում է այժմյան Խելալ բնակավայր/տեղանքում: Շիրնակից հարավ-արևելք, Ջուդի-դադ (երբեմնի՝ Աւարադ) լեռից ոչ հեռու՝ Նաև՝ Խալիլան-Խալիլյանի հետ՝ Ջեղիբեկից 50 կմ հս.-արևմուտք:	Խալիլա՝ քաղաք-երկիր, սահմանակից իսթական պետության՝ Երևի հարավ-արևմուտքից:
6	Լուխա	Նույնացվում է Ասսուրնադիրպալ Բ-ի հիշած Լուխա-ի հետ՝ Ամիդ-Դիարբեքիբեկից հարավ-արևելք, Գյուզել-Շեխրի մոտ (Ժ.—Է. Շ.):	
7	Նիլիպախրի	Հստակ չի տեղագրված: Ասվում է, որ պետք է տեղագրել մյուսների հետ:	
8	Ջինգուն (Ջիկունու, Ջիուկունի)	Նույնացվում է այժմյան Ջենգանի հետ՝ Տիգրիսի և Միդյատ քաղաքի միջև, Խալիլան-Խալիլյանից 15—18 կմ հյուսիս, Ջեղիբեկից մոտ 50 կմ հս.-արևմուտք, դարձյալ Ջուդի-դադին մոտ: Նաև՝ Արծկեի հետ (Ժ.—Է. Շ.):	
9	Մուցրու	Նույնացվում է Մուսասիր-Մուցաքիբի հետ՝ Ուրարտուի կրոնական կենտրոնը՝ Մեծ Ջաբ գետի վերնագավառում:	Մանուր, Մուրայ աշխարհ-եզիպտոսի հետ, ըստ Խեթ, հայ, պարսիկ, արաբ անվանումների:
10	Արինա (Քաղաք)	Նույնացվում է Ուրարտուի կրոնական կենտրոն Արդիբի-Մուսասիրի հետ:	Արունա բերդաքաղաքի հետ՝ Կումամանու-Կիցովատնա երկրում, Ախսա լեռան ստորոտին՝ ըստ Մուրշիլ Բ-ի տարեգրության:

* Տե՛ս Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Մ. Կ ատ վ ա լ յ ա ն, սույն հոդվածը:

նրա (մնացորդ) փոշին հավաքեցի և իմ քաղաքի՝ Աշշուրի դարպասի մոտ կուտակեցի՝ ապաղային (ի սարսափ)։ Այդ ժամանակ ես ողջ Մուցրա երկիրը խոնարհեցրի տիրոջս՝ Աշշուրի ոտքերի առջև» (ընդգծումը մերն է—Լ. Շ.)⁵։

Արդ, ըստ արձանագրության, պարզ են հետևյալ իրողությունները. ա. Սալմանասար Ա-ի արշավանքն «ուրուատրինների» դեմ տեղի է ունեցել նրա թագավորության առաջին տարում (մ. թ. ա. 1274 թ.)։ Սրիցս նշված այս իրողությունը կասկած չի հարուցել և, կարծում ենք, չի հարուցելու։ բ. Տվյալ տարում կաղմակերպվել է ընդամենը մեկ արշավանք, այն էլ՝ միայն «Ուրուատրի»-ի դեմ, մեկ այլ արշավանքի մասին որևէ ակնարկ իսկ չկա։ Դա նշանակում է, որ Արինու քաղաքը և Մուցրա երկիրը սերտորեն կապված են «Ուրուատրի»-ի հետ, որ ճիշտ չէ նրանց առանձնացնելը, մասնավորապես՝ առանձին երկիր համարելը, ինչպես վարվում են Մուցրա երկրի հետ։ գ. «Ուրուատրինների»-ի երկիրը, իր ութը երկրամասերով կամ գավառակներով, անմիջապես սահմանակից է Ասորեստանին, քանզի հեռավոր արշավանքի մասին ուրեմ ճշմարիտ կամ նկարագրություն չկա։ Ինչպես տեսանք, «ուրուատրինների» ըմբոստությունը լսելուն պես՝ Սալմանասարը զորք է գումարել և անմիջապես «բարձրացել է նրանց ամուր լեռները», և միջանկյալ որևէ այլ երկիր չի նկարագրել։ Եթե արշավանքը հեռավոր լիներ, այն էլ տարբեր երկրների վրայով, Սալմանասարը այդքան հակիրճաբան չէր լինի, մանավանդ որ դա անհարկ էր իր սասուրական պարծենկոտ թագավորների նկարագրական ոճին։ դ. Ուրուատրինները և նրանց ութ երկրամասերը գտնվել են յեռնաշատ տարածքում՝ «բարձրացա նրանց ամուր լեռները»։ ե. «Ուրուատրի»-ի բոլոր ութ լեռները մեկ ամբողջություն են երևում և ընդգրկված են մեկ սահմանափակ տարածքում։ Այնպես որ, որևէ երկրի ճիշտ տեղագրումը հավասարապես պայմանավորում է մյուս բոլորի տեղագրումը՝ հավանաբար, ըստ արձանագրության նշումների հաջորդականության։ զ. «Ուրուատրին» փոքր, խիստ սահմանափակ տարածք ունի (8 երկրամասերն ընդգրկել են ընդամենը 51 բնակավայր), որոնց գրավումն ու ավերումը հնարավոր է եղել ընդամենը 3 օրում։

Այսպիսով, Սալմանասար Ա-ի գրաված կամ վերագրված «Ուրուատրին» Ասորեստանին սահմանակից, փոքր լեռներով է եղել, որը, ըստ ամենայնի, համապատասխանում է Մեծ Հայքի Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգի Արարատա երկրին, ավելի ուշ՝ Տսորիքին, էլ ավելի ուշ՝ Ներքին Կորդիքին, իսկ ասսուրական այլ արձանագրություններով՝ Թումմե երկրին⁶։ Վերոնշյալ փաստերի առկայությամբ ու թելադրանքով, մասնավորապես, երբ Սալմանասար Ա-ն իր թագավորության առաջին տարում հեռագնա արշավանք չի կատարել և, բացի այդ, որ երկրագնդի մեկ այլ վայրում «Ուրարտու» «Ուրուատրի» անուններ չեն հիշված, անհնար է դառնում «Ուրուատրին» Հայաստանից դուրս տանելը, մտնականդ, Ամանոսի և Անտիտավրոսի միջնատարածքում գետեղելը։

Մ. Կատվալյանի նույնացումներն ու տեղագրումները, թերևս, դեր ունենալին (էջ 92—93), եթե Սալմանասար Ա-ը, իրոք, հասած լիներ Կիլիկիայի սահմանները, այն էլ՝ առաջին տարվա արշավանքի ժամանակ։

Սա, իհարկե, Մ. Կատվալյանի նախաքայլն է՝ «ուրուատրինների» կամ «Ուրուատրին», դուրս մղել Հայաստանից, դրանով իսկ կտրել «Ուրուատրի»-«Ուրարտու» անվանական կապը, որպեսզի «Ուրուատրին» բնօրրանի որևէ հավակնություն չունենա և հող նախապատրաստվի «Ուրարտու»-ի բնօրրանը Այրարատ նահանգում տեղագրելու համար։ Հաջորդ և հիմնական քայլը «Ուրարտու»-ի բնօրրանի նորոգվի տեղագրումն է, ավելի ճիշտ՝ Վանա լճի

⁵ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի, հ. 1, էջ 14։

⁶ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 22։ Մեր կարծիքով Թումմե-Տսորիք նույնացումը ևս անհավանական չէ. թե՛ տարածական իմաստով, և թե՛ անվանապես։

հարավից կամ վան քաղաքի շրջակայքից (նույն լճից) հյուսիս տեղափոխելը: Եվ որքան էլ զարմանալի է, նոր տեղադրումը նա կատարում է ըստ Սալմանասար Գ-ի (մ. թ. ա. 859—824) արձանագրությունների: Ըստ այդմ էլ նա եզրակացնում է. «...Ուրարտու «աշխարհի» բնօրրանը թե՛ իր զբաղեցրած տարածքով և թե՛ անվանումով միանգամայն նույնանում է Արարատ-Այրարատ «աշխարհին» (էջ 102):

Սալմանասար Գ-ի առթիվ գործածեցինք «զարմանալի» բառը. քանզի նրա տեղեկությունները վերաբերում են ոչ թե «Ուրարտու»-ի բնօրրանին (նույնիսկ «Ուրարտու» բառաձևը չի օգտագործված), այլ «ուրարտացի» Արա-սեհ (մ. թ. ա. 860—845) և նրա ոչ անմիջական հաջորդ՝ դարձյալ «ուրարտացի» կոչված Սարգուրի (մ. թ. ա. 835—825) պետությանը, որում, պարզվում է, «Ուրարտու»-ի բնօրրանը տվյալ ժամանակ չի էլ ընդգրկված: Այսպիսով, Սալմանասար Գ-ն ոչինչ չի ավանդել «Ուրարտու»-ի բնօրրանի մասին, իսկ Մ. Կատվալյանի ջանքերն էլ՝ նրանից այդպիսի տեղեկություններ կորզելու համար, նպատակին չեն ծառայում, որքան էլ վկայակոչվեն և վերավկայակոչվեն: Մ. Կատվալյանը, փաստորեն, դիմելով Սալմանասար Գ-ի տեղեկություններին (էջ 95—100), փաստախեղդ է արել ընթերցողին, ստեղծելով սոսկ դիտականության պատրանք: Եվ, իրոք, ասենք թե «ապացուցում է» (չնայած չի համոզում), որ Սալմանասար Գ-ի գրաված Խրքիա լեռը Արզաշկու-Արծաշկու մայրաքաղաքին մոտիկ Արարատն է (Մասիսը), կամ Մուգու-նիա բերդաքաղաքը՝ Վանա լճի հարավում չէր, այլ՝ հյուսիսում էր (դարձյալ չի համոզում) և այլն, և այլն: Մի՞թե սրանք փաստեր են, որ «Ուրարտու»-ի բնօրրանը տեղագրվի Այրաբատ նահանգում:

Մեր կարծիքով, նախքան Սալմանասար Գ-ի տեղեկություններին դիմելը, Մ. Կատվալյանը պետք է և պարտավոր էր նկատի ունենալ ակզբնադրություն հետևյալ իրողությունները. ա. Արդեն ասվեց, որ Սալմանասար Գ-ի տեղեկությունները վերաբերում են ոչ թե «Ուրարտու»-ի բնօրրանին, այլ ամբողջ պետությանը, ուստի և այդ տեղեկություններից բնօրրանի մասին տրվյալներ ստանալ հնարավոր չէ: Եվ իզուր չէ, որ ուսումնասիրողների մեծագույն մասն այդ առումով նրա տեղեկությունները չի օգտագործել: Բ. Ասո-րեստանի թագավորներից ոչ մեկը, ոչ էլ ինքը՝ Սալմանասար Գ-ը, Այրա-րատ նահանգ, մասնավորապես՝ Արարատյան դաշտ չեն մտնի, որ դրա հիման վրա երկիրը կամ նրա բնօրրանը կոչեն «Ուրարտու»: Իսկ եթե մտածենք, որ այն միջնորդավորված անվանում է, նորից ղեկավարություններ կծագեն՝ պարզապես փաստեր չկան: Դ. Հայտնի է, որ Արամեն և Սարգուր Ա-ը հույնապես, որոնց Սալմանասար Գ-ն արդեն «ուրարտացի» է կոչում, որևէ ձևով չեն առնչվել Այրարատ նահանգին՝ ո՛չ արշավել են, ո՛չ էլ տիրել: Լավագույնս՝ իրենց պետությունը հյուսիսից սահմանակից էր Այրարատին: Ուրեմն՝ նրանց «ուրարտացի» կոչելու պատճառը Այրարատ նահանգանունը չէր, իսկ եթե կարծենք, որ նրանք իրենց այդ բնօրրանը կորցրել էին (նվաճվել էր), դարձյալ հարցեր կառաջանան՝ ե՞րբ, ումի՞ց, ինչպե՞ս և կմնան առանց հիմնավոր պատասխանի: Դ. Ըստ բիայնական արձանագրությունների «Ուրարտու»-ի թագավորները՝ Մենուան (մ. թ. ա. 810—786), Արգիշտի Ա-ն (մ. թ. ա. 786—764), Սարգուր Բ-ն (մ. թ. ա. 764—735) բազմիցս նվաճելու վերանվաճել են Այրարատ նահանգի տարածքը, ինչպես նաև նրա կենտրոնադավառ Աղա երկիրը (ավելի քան 20 անգամ) և միշտ էլ կոչել էթիունի երկիր՝ հաճախ այն հորջորջելով «թշնամական» երկիր⁸, Արդ, եթե սա էր նրանց նախնիների բնօրրանը, ուրեմն ինչ-որ ակնարկ պետք է լիներ, սակայն այդ առթիվ՝ ոչ մի ակնարկ, ոչ մի տեղեկություն չկա: Ե. Այրարատ նահանգի տարածքը բիայնական պետության կազմում ընդգրկվել է Արգիշտի Ա-ի

7 Ուրուտարիների և նրանց բնակավայրի մասին առավել հանգամանորեն տե՛ս Լ. Փ. Շահինյան, «Ուրարտու» առեղծվածը, Երևան, 1994, էջ 125—142:

8 Լ. Շահինյան, նշվ. աշխ., էջ 170—189:

նվաճումներով մ. թ. ա. 782 թ. և հետո, որից շուրջ 80 տարի առաջ նրա նախնի Արամեն «ուրարտացի» էր կոչվում։ Ուրեմն՝ «Ուրարտու» անվան նախակիրգրը և «Ուրարտու» պետության բնօրրանը դարձյալ Այրարատ նահանգը է, այսինքն՝ Արաքսի հովտի Այրարատ-Արարատը, ինչպես ենթադրում են Մ. Կատվալյանը և այլք։

Այսպիսով, երբ համապատասխան փաստերը քննվում են համատեղ և համակողմանի, երբ չի անտեսվում ոչինչ, պարզվում է, որ Մ. Կատվալյանը «Ուրարտու»-ի բնօրրանի հին կամ ընդունելի համարված տեսակետը չի հերքել, իսկ նորն էլ, կամ իր պաշտպանածը, չի հաստատել, որով մերժելի է դառնում տվյալ հարցում նրա ամբողջ կատարածը։

Այսուհանդերձ, սա չի նշանակում, որ պետք է անքննադատ պաշտպանել հինը կամ ընդունելի դարձածը, այսինքն՝ «Ուրարտու»-ի բնօրրանը տեղագրել Վանա լճի հարավում կամ հարավ-արևելքի ընդարձակ տարածքում, կամ էլ լրացնելու, ճշգրտելու պահանջ բոլորովին չկա։ Ամենևին։ Այդ պահանջը կա և վաղուց էր զգացվում, այնպես որ Մ. Կատվալյանի հոգվածը սոսկ առիթ ծառայեց անդրադառնալու այդ պահանջին։ Բանն այն է, որ ընդունելի դարձածը ունի մի շարք անճշտություններ, պակասություններ, անորոշություններ, որոնց ճշտումն այժմ խիստ անհրաժեշտ է։ ա. Ենթադրվել է, իհարկե, ոչ առանց հիմքերի, որ «Ուրարտու»-ի բնօրրանը գտնվել է Վանա լճից հարավ կամ հարավ-արևելք, սակայն չի հստակվել բնօրրանի բուն տարածքը։ բ. Ուսումնասիրողների մեծ մասը, այդ թվում նաև Կատվալյանը, գտնում են, որ «Ուրարտու» անունը առաջացել է «Արարատ» անունից, կամ «Արարատ»-ը համարվում է «Ուրարտու»-ի նախածեր, սակայն հստակ չի բացատրվում, թե ո՞ր Արարատից, կամ՝ Արաքսից, թե Արարատից, որը և անորոշությունների, տարակարծիքների տեղիք է տալիս։ գ. Ուրարտուի բնօրրանը՝ ըստ Սալմանասար Ա-ի տեղագրելիս, ուսումնասիրողները ցուցաբերել են անհետևողականություն՝ ընդարձակելով բնօրրանի տարածքը։ դ. «Ուրուատրիններ» անունից ենթադրվել է «Ուրուատրին» ցեղանուն, որը ճիշտ չէ և չի հիշված։ Պարզապես, պետք է կռել «ուրուատրինների երկիր» կամ, ըստ ստուգաբանության, «արարադցիների երկիր», «Աքարադա երկիր»։ ե. «Ուրարտու»-Արարադա երկիրը-ուրուատրինների երկիրը՝ «Արատտա» անունով նույն տարածքում հիշված է նաև շումերական հնագույն դուրացականագրում, որը համարյա չի նկատված, չի արժեքավորված։ զ. Ուրուատրինների երկիր-«Ուրարտու»-Արարադա երկիրը ժամանակների ընթացքում հայտնի է նաև այլ անվանումներով (մասնավորապես՝ Թումմե-Տումմե-Տմորիթ), որոնց հստակումը մեծապես կնպաստի հարակից շատ հարցերի լուսաբանմանը։

Մեր ուսումնասիրություններից պարզվում է, որ այս և նմանաբանույթ հարցերի պատասխանները պայմանավորված են «Ուրարտու»-ի բնօրրանի ճշգրիտ որոշումով, տեղագրումով, որի միակ և ամենահուսալի բանալին Սալմանասար Ա-ի արդեն մեզ ծանոթ արձանագրությունն է։

Ինչպես տեսանք, Սալմանասար Ա-ն իր այդ արձանագրության մեջ երկու անգամ գործածում է «ուրուատրիններ» անվանումը։

Համարյա բոլոր ուսումնասիրողներն այստեղ հիշված «ուրուատրիններ» անվան «ուրուատ» բաղադրիչը իրավացիորեն նույնացրել են «Ուրարտու»-«Ուրարտու» անվան հետ և համարել վերջինիս նախածեր։ Այսինքն՝ լեզվաբաններն անկասկած է համարվել դրանց անվանական նույնությունը (ուրուատ-ուրուատրի-Ուրարտ-Ուրարտու (և, իրոք, անկասկած են) ընդդրում ենք՝ լեզվաբաններեն-անվանապես)։ Ավելին, այդ ակնբախ նույնությունը չի կասկածել նաև Մ. Կատվալյանը, ուստի բավարարվել է ասելով՝ «հրապուրանք է» (էջ 91), «զայթակղիչ է» (էջ 94), բայց «հնչյունական», «սոսկ ձևական նմանություն» է (էջ 94)։

9 Ասում ենք «համարյա», քանզի վերջերս այդ առիթով շեռհակալ աշխատանք է կատարել Ա. Մովսիսյանը (Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Երևան, 1992)։

Ճիշտ այսպիսի անկասկածելի նմանություն-նույնություն է նկատվել «Ուրարտու» և Արարատ (մեր կարծիքով՝ Արարադ) անունները համեմատելիս՝ այդ դեպքում «Ուրարտու»-ի նախաձև համարելով Արարատ (մեր կարծիքով Արարադ) անունը, Բարեխառնարար, Մ. Կառվալյանն այս նույնացումը ոչ միայն ընդունում է, այլև՝ նոր նրբերանգներով յրացուցիչ հաստատում է (էջ 100—101):

Այսպիսով, «Ուրարտու» անվան առաջացման համար, ըստ եղած կարծիքների, առկա է երկու նախաձև՝ «ուրուատ» կամ «ուրուատրի» և Արարատ կամ Արարադ: Այստեղից էլ՝ դույցիկ մանրուք թվացող, բայց շատ կարևոր հարց՝ այդ երկուսից ո՞րն է «Ուրարտու» անվան նախաձևը կամ նախա-նախաձևը: Պետք է ասել, որ պատմագիտությունն այս հարցում հասել է պատասխանի շեմին ու ինչ-որ կախարդանքի ուժով կանգ է առել: Մեր կարծիքով, ոչ միայն «Ուրարտու» անվան, այլև «ուրուատ» կամ «ուրուատրի»-ի նախանախաձևը Արարադ անունն է¹⁰, որը տրվել է և Մեծ Հայքի Կադմեա Տուն կամ Կորճայք նահանգի Արարադ լեռանը (սլավ.՝ Նիրուր, Ջուդի-դադ) ու Արարադա երկրին) երբեմնի Տմորիքին, վաղ միջնադարի Ներքին Կորդիք գավառին՝ վերը նշած յետոյ շրջակայքում): Այս պնդման համար հիմք է ծառայում հետևյալը. ա. «Արարադ»-ը հնագույն ժամանակներից (դույցիկ նախաշրջանից շրջանից) եկող անուն է՝ ի տարբերություն «ուրուատ» կամ «ուրուատրի» անվանաձևերի. բ. «Արարադ»-ը լեռնանուն և երկրանուն է, իսկ «ուրուատ»-«ուրուատրի»-ն տվյալ տարածքի բնակիչներին տեղանունով կոչող անվանում՝ այստեղացի, այնտեղացի իմաստով: դ. Ինչպես կարծել են, որ «Ուրարտու»-ի նախաձևը Արարատն է, այդպես էլ պետք է ենթադրել, որ «ուրուատ»-«ուրուատրի»-ինը Արարադն է: Եվ, իրոք, երբ նկատի ենք ունենում սեմական յեղուններին հատուկ քմայնացման օրենքը և «ու» հրու-լյունի փոխարեն «ա» ենք արտասանում, «ուրուատ»-ը դառնում է «Արաատ», որը նույն Արարադն է՝ սոսկ տ տառերի միջև եղած «ր»-ի կորստով: դ. «Արա-րադ» անունը համարյա անաղարտ՝ Արատա ձևով, քանիցս գործածվում է շումերական հնագույն դուցազնավեպում: Սա ևս պարտավորեցնող է, մա-նավառդ որ Արադ-Արատա, ինչպես կոչանքներ, տեղագրվում են միև-նույն տարածքում:

Այսպիսով, իւրուատ-ուրուատրի-Ուրարտու-ի բնօրրանը փնտրել, հավասարակշռել նշանակում է փնտրել Արարադա երկիրը, այսինքն՝ հարցը քննարկել համապատասխան փաստերի ամբողջության մեջ՝ առանց արհեստական տրոհման և նույնքան արհեստական հակադրությունների: Եվ քանզի վերոնշյալ նմանակ անվանումների նախանախաձևը Արարադ անունն է, նախ դիմենք դրան վերաբերող տեղեկություններին:

Արարադա երկրի մասին, հենց Արարադ ձևով, տեղեկություններ են ավանդել վաղ միջնադարի հայ պատմիչները՝ Անանունը (մ. թ. VII դ. պատմիչ Սեբեոսի աշխատությանը՝ Կից) և Մովսես Խորենացին, երկուսն էլ, ըստ իրենց վկայությունների, օգտվելով մ. թ. ա. II դ. պատմիչ Մար Արաս Կատինայի Մատյանից:

Նոսելով Հայկ նահապետի և նրա զարմերի՝ Բաբելոնից Հայաստան վերադառնալու մասին, Անանունը գրում է. «Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց անդրանկելոցն ի Բաբելոն, զնացելոցն ընդ կողմանս հիւսիսոյ յերկիրն Արարադայ՝: Զի շուեաց խաղաց զնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն և ամենայն աղխին հանդերձ, և շոգաւ բնակեցաւ յերկիրն Արա-

¹⁰ Լեզվաբանորեն, իհրոկե, որևէ տարբերություն չկա Արարադ և Արատ անունների միջև, սակայն դրանք տեղագրորեն, ինչպես նշվեց, խիստ տարբեր են: Եվ քանզի Արարադա երկիրն է մեր փնտրած բնօրրանը, այսուհետև նմանակ Արատա անունը զուգահեռ չենք գործածելու:

* Այս և հետագա ընդգծումները մերն են:

րադայ, ի տանն, որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ՝ հարբն և եղբարբքն հանդերձ:

Եւ ապա յետ զնա Հայկն (Արարադա երկիրը—Ն. Ե.) կալուած ժառանգութեան Կաղմեայ թողին իւրում որդւոյն Արամենակայ: Եւ ինքն շուեաց զնաց անտի ևս ի հիւսիսակողմն և շոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդակ՝ դաշտավայրի միոջ, և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարֆ, յանուն Հարցն:

Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ: Ապա՝ Ինչի արշավանքի առիթով նորից հայտնում է. «Եւ զաւրածողով լինի Բել արքայ ի Ռարբլոն և դիմէ գնայ ի վերայ Հայկայ սպանանել զնա:

Գայ (Բելը—Ն. Ե.) հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի (Զրվան=Սեմի շինածը—Ն. Ե.), զոր շինեալն էր ի լեռնոտինն, և Կաղմեայ փախստական գնաց ի Հարֆ առ հայր իւր ազդ. առնել նմա, և առէ. «Դիմեալ գայ Բել արքայ ի վերայ քո և եկն հհաս մինչ ի տունն անդր (լեռան մոտի տունը—Ն. Ե.), և ես կնալ իմով և որդւովք ահաւասիկ գամ փախստական»: Ապա նկարագրելով Հարկի և Բելի պատերազմը և Հայկի հաղթանակը, շարունակում է. «Եւ Հայկն գարձաւ ի տեղի իւր և շոգաւ կալաւ Հայկն գերկիրն Արարադայ (Բելից հետո վերագրավել է —Ն. Ե.), և բնակեցաւ անդ՝ ազգաւ իւրով մինչ և ցայժմ (այսինքն՝ Հայկի ազգը մինչև այժմ՝ հեղինակի ժամանակը—Ն. Ե.): Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա (Արարադա երկիրը—Ն. Ե.) կալուած ժառանգութեան Կաղմեայ թողին իւրում, որդւոյ Արամենակայ եղբար շարմայի: Եւ Արամենակայ հրամայեաց արքայ ի հիւսիսակողմն, ուր ինքն իսկ դադարեաց զառաջինն (այսինքն՝ հրամայեց զնալ Հարք—Ն. Ե.):

Եւ եղև յետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթանեսին (գուցե՝ «եւթ») և զարս նոցա, զդստերս և զդստերս նոցա և զամենայն աղխ իւր, և շոգաւ բնակեցաւ անդէն (Արարադից—Ն. Ե.) յառաջնումն գաւառին, զոր կոչեցին յանուն հարց իւրեանց՝ Հարֆ: Ապա զնայ անտի ևս Արամենակ ի հիւսիսակողմն, և երթեալ իջանէ երկիր մի խորին դաշտավայր, որ կայ ի մէջ բարձրաբերձ լեռանց. և հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ յորդահոսան, որով անցեալ Արամենակ բնակե անդ, և շինէ զերկիրն ժառանգութեան իւրոյ՝ զվայրն, լեռնակողմն զառապար:

Զկնի Արամենակայ որդի նորա Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան, և անուանէ զանուն ըստ անուան իւրոյ Արամայի (խոռքը Արամվիր մայրաքաղաքի մասին է—Ն. Ե.): Եւ որդիքն նորա սկսան բազմանալ և լնուլ զերկիրն: Եւ շինեցին գաւառք:

Մեռաւ և Արամայիս, և կալաւ զերկիրն որդի նորա Ամասիա: Եւ ապա ետ նորա Գեղամ: Մեռավ Գեղամ, և տիրեաց որդի նորա Հարմայ, ապա որդի Հարմայի Արամ: Ապա որդի նորա Արայն Գեղեցիկ, որով անուն ինկ զաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարադա¹²:

Այժմ դիմենք Մովսես Խորենացուն, «Որում (Բելին—Ն. Ե.),—գրում է Խորենացին,—ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամենակ (նաև՝ Արամենակ, Արամենակ—Ն. Ե.) ի Բաբելոնի՝ շու աւաւրեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է կողմանս հիւսիսայ, հանդերձ որդւոք իւրովք և դստերոք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորոք, թուով իբրև երեք հարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիս: Երբեք բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ժառանգութիւն Կաղմեայ որդւոյ Արամենակայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ

¹¹ Բնագրում՝ անդրէն, բացահայտ վրիպակ է:

¹² Ս և բ է ո ս, Պատմութիւն, Երևան, 1979, գլ. Ա (այսուհետև հղումները՝ բնագրին կից):

զրոյց» (զրոյցը նշված է որպէս օժանդակ աղբյուր—Լ. Շ.), «Եւ ինքն խաղայ, ասէ (Մար Աբասը—Լ. Շ.), այլով աղիւսին ընդ արեւմտոս հիւսիսոյ. զայ ընակէ ի բարձրալսնդակ դաշտի միում, և անուանէ զաւնուն լեռնադաշտին Հարֆ, այս ինքն թէ հարբ են աստէն բնակեալը՝ աղղի տանն թորդոմայ, Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշեն, Յիշի և ատանօր ի պատմութեանս (դարձյալ Մար Աբասը—Լ. Շ.)՝ ի հաւատոյ կողմանէ դաշտիս այստիկ, առ երկայնանստիւ միով լեռամբ (նկատի ունի Հայկական Տաւրոսը կամ Սիւմ. լեռնաշղթան—Լ. Շ.), բնակեալ յառաջագոյն արբ սակաւք, ինքնակամ հնադանդեալ զիւլաղինն, Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս»¹³,

Հաջորդ զլիսում («Յաղապս պատերազմին և մահուանն Բելայ») պատմելով Հայկ-Բել նամակազրութեան մասին, Պատմահայրը զրուում է. «Ապա զօրածողով լինի ի վերայ նորա Տիաանեանն Բէլ ամրոխիւ հետեակ զօրաց, զայ հասանէ ի հիւսիսի, երկիրն Աւստաղայ, մերձ ի տունն Կաղմեայ: Փախստական լինի Կաղմոս առ Հայկ, քաջութեամբ առաջի իւր առաքէ. ժգիտեա, ասէ, ով մեծդ զիւցաղանց, զի դիմեալ դայ ի վերա քո Բէլ յաւերժիք քաջք և երկնադիգօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեալ, և զամ առասիկ տաղնապաւ: Արդ՝ աճապարեա խորհել զոր ինչ դործելոց ևս»:

«Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զորութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սատուիկ ընդ դառ ի վայր հեղեղայ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրատրաց: Ասա ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռոնս, արս քաջս՝ և աղեղնաւորս, թուով յոյժ նուաղունս, և դայսն ևս որ ընդ խրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ սղի են քուրֆն, մանունս ունելով յինքեան ձկունս» (նկատի ունի Վան լիճը—Լ. Շ., Ա. գլ. ԺԱ), Ապա՝ նկարագրելով ճակատամարտն ու Բելի սպանվելը, նույն գլխի վերջում ավելացնում է. «Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և զաւառն այժմ անուանի Հայոց ձոր, իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ անուանեսց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին գերեզմանակը (նաև՝ գերեզմանք—Լ. Շ.), Բայց զղիական Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ (Մար Աբասը—Լ. Շ.), հրամայէ Հայկ տանել ի Հարֆ, թաղել ի բարձրավանդակ տեղոջ (երեւի նկատի ունի Նեմրոթ լեռը—Լ. Շ.), ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք»:

Հաջորդ զլիսում, որը, փաստորեն, Հայկի հաջորդների ու նրանց գործերի համառոտագրումն է, կարդում ենք. «Զկնի այսորիկ (ճակատամարտից հետո—Լ. Շ.) դառնալ ասէ Հայկին ի նոյն տեղի բնակութեան, և Կաղմեայ թոռին իւրում բազում ինչս յանկածէ պատերազմին պարգեւէ, և յիւրոց ընդոծնացն՝ արս անուանիս: Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն (այսինքն՝ Արարադա երկրում—Լ. Շ.), և ինքն երթեալ դադարէ յանուանեալ դաշտին Հարֆ: Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բարեկոնի, որպէս վերագոյն ասացաք: Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռանի, յանձն առնելով զբովանգակ ազնն Արամանեակայ որդւոյ իւրում:

Իսկ նորա (Արամանեակը—Լ. Շ.) թողեալ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ և զՄանաւազ, ամենայն աղիւսին իւրեանց ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարեմտից հիւսիսոյ զհզր ծովուն աղւոյ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբ... Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զՀէնս՝ իւր:

13 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, գիրք Ա, գլ. Ժ (այսուհետև հղումները՝ բնագրին կից):

ե ի նմանէ՝ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին հոռոխոռոնեաց... Իսկ Արամանեկայ ամեալ գամեհայն բագմութիւնն՝ խաղայ յարեւս հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարբն-պեալ լեռանց, գետոյ կարկաջասանի յարեւտից ընդ մէջ անցանելով» (հա-ջորդում է դաշտի առավել հանդամանալի տեղագրումը—Լ. Շ.): Ապա՝ «Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի հի-սիսոյ կողմանէ դաշտին, և գոտն լեռինն ի նոյն կողմանէ, և զլեռնն անուա-նէ յանկագոյն յիւր անուն Արագ՝, և զկալուածսն՝ ոտն Արագածոյ...» (Ա, զԼ. ԺԲ):

Քննվող հարցի համար կարևոր են նաև Մովսես Խորենացու հետևյալ նշումները: Արամանեակի կամ Արմենակի որդի Արամայիսը դաշտամեջ հո-սող դետի մի ելուստի մոտ կառուցում է «տուն բնակության» և իր անունով կոչում Արմալիւ, իսկ գետը իր թոռն՝ Երաստի անունով՝ Երասխ (հետո՝ Արաքս): Արամայիսի որդի Ամասիան դաշտի հարավային կողմի սպիտա-կափառ գագաթով լեռը իր անունով կոչում է Մասիս: Ամասիային հաջորդում է Գեղամ որդին, Գեղամին՝ Հարմա որդին, Հարմային՝ Արամ որդին, որի անունով մեզ հայերիս, կոչում են հարևան ազգերը (Ա, զԼ. ԺԲ): Արամին հաջորդում է Արա Գեղեցիկ որդին, այսինքն՝ Հայկից հետո յոթերորդ սե-լունդը (Հայկ-Արամանեակ-Արամայիս-Ամասիա-Գեղամ-Հարմա-Արամ-Արա Գեղեցիկ), որն իր անունով Երասխահովիտ դաշտը կոչում է Այրարատ¹⁴: Վերջինս կոչվել է նաև՝ «դաշտն Արայի» (Ա, զԼ. ԺԵ, ԺԶ), որի անունով էլ՝ այն ընդգրկող նահանգը՝ Այրարատ, իսկ հաճախ էլ թե՛ դաշտը, թե՛ նահան-գը՝ Արարատ:

Ինչպես տեսնում ենք, Անանունը և Մովսես Խորենացին Հայկական լեռ-նաշխարհում հստակ տարբերակում են համարյա նույնանուն երկու տարա-ծաշրջան կամ երկրամաս՝ Արարադ կամ «երկիրն Արարադա» և Այրարատ-Այրարադ-Արարատ անուններով: Տարբերակում են, կարելի է ասել, բժա-խնդրորեն, աշխարհագրական նշումներով, տեղանքների տարբերակիչ նկա-րագրութուններով և այլն: Ուստի զարմանալի է, որ առ այսօր, նույնիսկ գիտական շրջանակներում, դրանք շփոթի կամ այլ թյուրիմացությունների տեղիք են տալիս: Դրանցից մեկը՝ Արարադը, գտնվել է Հայկական լեռնաշ-խարհի ծայր հարավում, սահմանակից Ասորեստանին, իսկ մյուսը՝ Այրա-րատ-Արարատը, հյուսիսում՝ Երասխ-Արաքսի հովտում: Մեկի Արարադ ա-նունը Հայկ նահապետից առաջ է եղել, այսինքն՝ մ. թ. ա. XXV դ. առաջ (ստուգաբանվում է «բարձր երկիր»՝ անհավանական չէ), մյուսի Այրարադ-Այրարատ-Արարատ անունը ծագել է Հայկի 7-րդ զարմիկ Արա Գեղեցիկի անունից, ըստ Խորենացու ժամանակագրական նշումների՝ մ. թ. ա. 1978—1968 թվականներից: Մեկը՝ Արարադա երկիրը, Կադմեա տուն կամ Կորճաթ նահանգի կազմում, եղել է Հայաստանի հարավային կուսակալութունը, գու-ցեւ այդ կուսակալության ամենամրակառույց դարպասը, մանավանդ՝ հնա-գույն դարերում, իսկ մյուսը՝ Այրարատ-Արարատը, Հայոց պետության թա-գավորական ուստանը: Մեկի հռչակված լեռը Արարադ է կոչվել խոր հնագա-րեից, ինչպես նշվեց, թերևս նախաջրհեղեղյան ժամանակից (ապացույց՝ շումերական դիւցազնավեպի Արատտա անունը), որն անցել է նաև շրջա-կա երկրին (նկատի ունենալ «բարձր երկիր» ստուգաբանութունը), մյուսը՝ Արարատ երկրանունը՝ մ. թ. ա. XX դ. 80-ականից ոչ շուտ: Առաջինը նա-խապես կոչվել է Արարադ, հետո՝ Նիբուր, գուցե՛ Նիցիր, ապա՝ Ջուդի-դադ, երկրորդը՝ Մասիս՝ ապա՝ զուգահեռ նաև Արարատ, շնայած երկուսն էլ հըռ-չակված են որպես ջրհեղեղից փրկվածների հանգրվան: Ի դեպ, այս վերջին

¹⁴ Այրարատ անվան ուղագրով տարբերություններ կան Խորենացու «Պատմութիւն Հայո-ց»-ի ձեռագրերում՝ Արայրատ, Այրարատ, Արարատ, Արարատ (տե՛ս Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 191, 216, 282, 283, 340 և այլն): Կարծում ենք, որ այս բոլորի նախաձեռնողն է Այր+Արայ+արտ: Այսինքն՝ Այր Արայի դաշտ (արտ):

պատկերացումը ե անվանական նմանությունը, կարծեք թե, «հարթել» են վերը նշած ակնհայտ տարբերությունները՝ Վերջապես, Արարադա երկիրը հաճախակի առնչվել է սեմական աշխարհին (վերջիններիս արշավանքներով, պատերազմներով և այլն), իսկ Այրարատ-Արարատը՝ երբեք (փաստ չկա)։ Սա ևս անբեկանելի տարբերություն է։

Արգ, նշված տարբերություններից ակնհայտ է դառնում, որ ըստ հայ պատմիչների փնտրվող տարածքը, այսպես ասած, հաբափի Արարադա երկիրն է՝ Ասորեստանին սահմանակից երկիրը, որը տեղագրվելու է Կեստեյալ հատկանիշներով. ա. Արարադա երկիրը գտնվել է Բաբելոնից (Բաբելոնիայից) հյուսիս, և քանզի Բաբելոնիայից Տիգրիսն ի վեր՝ հյուսիս, նախ Ասորեստանն է, ապա Հայաստանը, ուրեմն Արարադա երկիրը նաև Ասորեստանից հյուսիս է։ Բ. Արարադա երկիրը սահմանային տարածք է՝ Հայաստանի ծայր հարավկողմում, քանզի՝ Ասորեստանի վրայով հյուսիս գալիս և՛ Հայկը, և՛ Բելը անմիջապես մտել են Արարադա երկիր։ Գ. Թե՛ Անանունը և Թե՛ Խորենացին Արարադա երկիրը համարել են լեռներկիր և, իրոք, այդպիսին է, նկատի ունենալով դրա տարածքային նույնությունը հետագա Տմորիք կամ ներքին Կորդիք գավառին։ Այստեղ է գտնվում Արարադ լեռը, հետագա նիբուր-Ջուգի դաղը և, բացի այդ, այստեղ են խաչավորվում Հայկական Տավրոսի և Կորգվաց լեռնաշղթաների լեռնաբազուկները։ Դ. Արարադա երկիրը երևում է իբրև ոչ այնքան ընդարձակածավալ տարածք, գուցե նախապես Քրադեցրեյ է սոսկ համանուն լեռան շրջակայքը։ Այստեղ կարևոր են պատմիչների հետևյալ նշումները. «Ջի չուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնն է... և չոգաւ քնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տունն, որ ի լեռնոտինն» (Անանուն)։ կամ՝ «Գայ (Բելը) հասանէ յերկիրն Արարադայ ի տունն... գոր շինեալն էր ի լեռնոտին... (Անանուն), կամ՝ «Ի Բաբելոնէ չու արարեալ (Հայկը) գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ... եյթեալ քնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի...» (Խորենացի) և այլն։ Ե. Արարադա երկիրը սեմական աշխարհի Հայաստանի հետ կապող անցումային տարածք է, իսկ Հայաստանի համար ունեցել է նաև ռազմապաշտպանական շատ կարևոր նշանակություն։ Զ. Արարադա երկիրը Հայաստանի և սեմական աշխարհի միջև ընկած ամրակառույց համակարգ է։ Ապացույց, թեկուզ, Հայկի՝ Բաբելոնից այստեղ փախչելն ու հանգրվանելը կամ Բելի մահից հետո նույն երկրի վերագրավումն ու Կադմոսին վերահանձնումը և այլն։ Այլ կերպ ասած՝ Արարադա երկիրը Հայկյանների համար խիստ հուսալի պաշտպանական դեր է ունեցել։ Է. Արարադա երկրի պաշտպանական այս դերը շարունակվել է նաև հետագա դարերում, նույնիսկ հայ Արշակունիների ժամանակաշրջանում։ Նկատի ունենք Տմորիք գավառը՝ իր շատ նշանավոր Ալկի և Թման անառիկ բերդ-ամրոցներով։ Ս. Տ. Երեմյանն այս բերդերի մասին գրում է. «Ալկի ամրոց-Տմորյաց աշխարհում, ասուրա-բաբելական արձանագրությունների «էլակուշ», այժմ էլի։ Այս վայրը Ստրաբոնի մոտ հիշվում է Ζήτηλα δέσφ, որ առաջացած պիտի լինի հայերեն Շատ-Ալկի ձևից (հմտ. Շատ բերդ)։ Վարդանի «Աշխարհացայց»-ում կոչվում է Ալկէ-թար»։ կամ՝ «Թման գյուղ-Հռիփսիմեանց վարքում կոչվում է Թմնիս, հուն. Κωμη Θυματων, ասոր. Թεμανδῶ, արար. Թamanūn, այժմ՝ Բեթմանին կամ Հեշտանն. գտնվում էր այժմյան Ջուղի-դաղ (հին Արարատ, Արարտու, Կրբաւ) գագաթի հարավային փեշերին։ Ըստ տեղական ավանդության, նույն տապանը կանգ է առել այս գագաթի վրա, և նույն իր ազգով բնակություն է հաստատել Թմանում։ Այս վայրի անունով ամբողջ Կորդուք գավառը կոչվել է Թամոնիտիս Ταμωνιτις—Ստրաբոն, XI, 14,5)»¹⁵։

Այսպիսով, Արարադա երկիրը տեղագրորեն ևս նույնանում է Սալմանասար Ա-ի հիշած ուրուատրիների երկրի հետ՝ իր փոքրոթյամբ, լեռնոտ

տարածքով, ամենակարևորը՝ Ասորեստանին անմիջապես հյուսիսից սահմանակից լինելով։ Այնպես որ, տեղագրորեն ևս «ուրուտտրիներ» ասվածը նշանակում է արարադրիներ-արարադյաններ։ Ասելն իսկ ավելորդ է, որ այս նույնությունն առավել հիմնավոր և առավել ցցուն է երեւում, երբ նկատի ենք ունենում Արարադա երկրի հետագա Տմորիք (հավանաբար՝ նախապես Թմորիք, Թուման բերդ-ամրոցի անունից) և «ուրուտտրիների» երկրի Թուման-Տուման անվանումները։ Թուման ևս, ըստ Թիգլաթասար (մ. թ. ա. 1115—1077) և Ասուրնազիրայի Բ-ի (մ. թ. ա. 883—859) արձանագրությունների¹⁶, Ասորեստանին հյուսիսից անմիջապես սահմանակից նախընթաց, աշխինքն՝ Հաբակկան լեռնաշխարհի երկիր է, ոչ մեծատարած ու լեռնոտ, Ասորեստանից Հայաստան մտնող երթուղու շրջակայքում տարածված անցումային երկիր։ Իսկ եթե նկատի ունենանք փոխհաստատման օրենքը՝ Տմորիք = Թուման, անհավանական չէ նաև Թուման երկրի ռազմապաշտպանական ամրությունը և այլն։

Արարադա երկրի (հետևաբար՝ «ուրուտտրիների» երկրի, Ուրարտու-ի) տեղագրման համար շատ կարևոր է նաև Արատտա երկրի տեղագրումն ըստ շումերական հնագույն դուցազնավեպի տեղեկությունների։ Պարզ է, այստեղ ևս պետք է կիրարկել Արարադ = Արատտա փոխհաստատման օրենքը։

Շումերական դուցազնավեպում հիշված Արատտա երկրի տեղագրումով զբաղվել են մեկ տասնյակից ավելի հայ և օտարազգի գիտնականներ։ Ոմանց կարծիքով Արատտան պետք է տեղագրել Աֆղանստանում, ոմանց կարծիքով՝ Իրանում, այն էլ նրա ? տարբեր տարածքներում՝ ըստ տարակարծիքների, ոմանց կարծիքով՝ Հայկական լեռնաշխարհի տարբեր տարածքներում։ Առ այսօր գոյություն ունեն Արատտան տեղագրող 12 տարակարծիքներ, որից 3-ը՝ Հայաստանում տեղագրող հայ հետազոտողների կողմից¹⁷։

Կարծիքների այսպիսի առատությունն իսկ ապացույց է, որ Արատտայի տեղագրման ուղղությամբ անելիքները քիչ չեն, որ նախորդ կարծիքները հանգամանալի քննարկման են կարոտ, սակայն մեր նպատակն է ուշադրություն դարձնել «Արատտա»-ի, այսպես ասած, հայաստանյան տեղագրումներին, ցույց տալ դրանց ճիշտն ու անճիշտը, հիմնավորն ու անհիմնը և զալ ընդհանուր եզրակացություն։ Սա էլ ոչ այն պատճառով, որ տեղագրում են Հայաստանում, այլ այն, որ «Արատտա»-ի արտասահմանյան տեղագրումները մեծապես շեղվում, նույնիսկ հակասում են շումերական դուցազնավեպի, աշխինքն՝ միակ սկզբնաղբյուրի տեղեկություններին։ Բացի այդ, դուցազնավեպի համապատասխան տեղեկությունները քննարկելիս, պարզ կդառնա, թե ուր պետք է տեղագրվի «Արատտա»-ն։

Արատտան Հայաստանում տեղագրելու առաջին փորձը կատարել է Մարտիրոս Գալուսթյանը։ «...Պիտի ընդունել, — գրում է նա, — թե Արատտա քաղաք-պետություն երկիրը գտնվում էր Վանա լճի (Հայոց Ձորի և Առքերանի) շրջանից սկսած դեպի վեր՝ տարածվելով Արմե-Արխի-Արածանի-Հաբակկաններից մինչև Արագած-Արիա-Արեխ-Արխու շրջանները..., մեկ խոսքով՝ Այրարատ կոչված աշխարհը՝ կենտրոն ունենալով Սալմանասար Գ-ի հիշած Էրիտիա (Արատտա)՝ լեռը Արամալիի մոտ ու Արարատը»¹⁸։ Ավելի վաղ հրատարակած իր մեկ այլ աշխատության մեջ կարդում ենք. «Ըստ սումերական մի դուցազնագրական զրույցի՝ Սումերական հնագույն քուրմ-արքաները սերտորեն կապված են եղել Aratta անունով մի քաղաք-պետության հետ, որը գտնված է եղել, ըստ Kramer-ի, Ուրմիա լճի շրջանում։ Անհավանական

16 Լեո, Երկեր, հ. Ա, 1966, էջ 183, 199—202, հմմտ. Մ. Շտրեյբ, Հայաստան, Քրդստան և Արևմտյան Պարսկաստան բարելավան-ասորեստանյան սեպագրերու համաձայն, Վիեննա, 1904, էջ 8—9, Լ. Սախտալեան, Ասորեստանեայ և պարսիկ սեպագիր արձանագրությունք, Վիեննա, 1901, էջ 108—122, Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 58 և այլն։

17 «Արատտա»-ի տեղագրումների մասին տե՛ս Ա. Մոզսիսյան, նշվ. աշխ., էջ 18—19։

18 Մ. Գալուսթյան, Արամեիա, Սուբարտու և Սումեր, Բնյութ, 1988, էջ 83։

չէ, առ այս Aratta-ն գտնված լինի Ուրուարտիի-Արարադ լեռներում»¹⁹ (ընդգծումը մերն է— Լ. Շ.):

Արատտա-ն Հայկական լեռնաշխարհում տեղագրող հաջորդ հետազոտողը, ըստ շումերական դյուցազնագրության տեղեկությունների, Ա. Մովսիսյանն է։ Հենվելով դյուցազնավեպի «էնմեբարր և էնսուխեշդանան» վիպերգի «Ուրուկի գետ» նշումի վրա և «Ուրուկի գետ»-ը նույնացնելով Եփրատին, նա եզրակացնում է. «...Ուստի և Արատտան պետք է փնտրել Եփրատի ավազանում», իսկ ըստ «Լուգալբանդան և Խուռումլեռ» վիպերգի դրում է. «Շարունակելով Շումեր-Խուռում ճանապարհը (Խուռումը գտնվում էր Շումերի և Արատտայի միջև), կրկին դուրս կգանք Հայկական լեռնաշխարհ, այս անգամ Վանա լճի ավազան»²⁰ (ընդգծումը մերն է— Լ. Շ.): «Այսպիսով, Արատտա երկրի... կազմի մեջ են մտել առնվազն Եփրատի Հայկական Տավրոսով անցման շրջանը և Վանա լճի ավազանը»²¹,— եզրակացնում է հեղինակը։

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները Հայաստանում Արատտա փրնտրելիս, բացահայտորեն երկվորյան մեջ են։ Այն է՝ երկուսն էլ, թեպետ տարբեր ուղիներով (մեկը՝ ջրային, մեկը՝ ցամաքային), հասել են Տիգրիս գետի, այսպես ասած, հայաստանյան հոսանքները՝ մոտավորապես այնտեղ, ուր Տիգրիսին է միանում հետագա Խաբուր վոշված վտակը, ուր Արարադա երկիրն է՝ ուրուարտիների երկիրը, ուր Արարադ գագաթն է՝ հետագա Նիբուր-Ջուդի-գաղը և այլն. (նայել համապատասխան դանկացած քարտեզ), ուր իրենց իսկ բերած փաստերով պետք է Արատտա տեսնեն, հանկարծ, նույնիսկ զարմանալիորեն, հայացքները հառում են Հայաստանի այլ տարածքներու Ըստ Մ. Գավուրճյանի, ինչպես տեսանք, Արատտան «Արարատ կոչված աշխարհն է» (պարզ է՝ Արաքսի հովտի), իսկ ըստ Ա. Մովսիսյանի «Արատտա երկրի... կազմի մեջ են մտել առնվազն Եփրատի Հայկական Տավրոսով անցման շրջանը (այդ շրջանը՝ Մովք նահանգի արևմտյան գավառներն են— Լ. Շ.) և Վանա լճի ավազանը»։

Այժմ բերենք Արատտա-ի մասին տեղագրական բնույթի բոլոր այն տեղեկությունները, որոնք նկատել են Մ. Գավուրճյանն ու Ա. Մովսիսյանը, իսկ ընկառվածները կթվարկվեն վերջում՝ համապատասխան հղումներով։ ա. Արատտան բարձր լեռնային երկիր է²²։ Այսպես է ըստ շումերական դյուցազնավեպի հինգ վիպերգերի, ուր խոսվում է Արատտայի մասին։ Այսպես է նաև ըստ աքքադական «Գիլգամեշ» դյուցազնավեպի՝ «Գիլգամեշը և անմահ Ուրուկի երկիրը» վիպերգի։ բ. Արատտան Շումերի հետ կամ վերջինիս կենտրոն Ուրուկի (=էրեբի) հետ կապված է եղել գետային ճանապարհով, որը, ինչպես նշվեց, կոչվել է «Ուրուկի գետ»։ Ըստ Մ. Գավուրճյանի այդ գետը Տիգրիսն է, ըստ Ա. Մովսիսյանի՝ Եփրատը²³։ գ. Արատտա-Շումեր գետային ուղին եղել է միակողմանի, բեռներ են տեղափոխվել միայն Արատտայից դեպի Շումեր²⁴։ գ. Շումերից դեպի Արատտա (բնական է՝ նաև հակառակը) ոռոգություն են ունեցել նաև ցամաքային երկու հանապուհներ, որոնքից մեկը անցել է Խուռում լեռան մոտով²⁵։ ե. Խուռում (=Հուրում) լեռը գտնվել է Շումերի և Արատտայի միջև, սակայն Շումերից բավականաչափ հյուսիս՝ Արատտային սահմանակից, կենտրոնական Միջագետքի և Հայկական

¹⁹ Մ. Գավուրճյան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրեալ, 1982, էջ 29, ծան. 6։

²⁰ Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 11, 15։

²¹ Նույն տեղում, էջ 15։

²² Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 11։

²³ Մ. Գավուրճյան, Արմենիա, Սուրբաբուր և Մումեր, էջ 80—82, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 10—11։

²⁴ Մ. Գավուրճյան, նշվ. աշխ., էջ 81, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 13։

²⁵ Մ. Գավուրճյան, նշվ. աշխ., էջ 80—81, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 13—15։

լեռնաշխարհի միջև²⁶ զ. Արատտայից գետային ճանապարհով Շումեր են տեղափոխվել շինաքարեր, այլ շինանյութ, մետաղներ, թանկարժեք քարեր: Հիշված են հատկապես ոսկի, արծաթ, բրոնզ, կապար, լաջվարդ (լազուրիթ) և այլն: Իսկ Շումերից Արատտա հիմնականում բերվել է ցորեն²⁷, է. Արատտայից Շումեր հոսող գետում, ըստ դյուցազնավեպի, ապրել է գետի անսովոր ձուկ: Մ. Գավուքճյանը այդ անսովոր ձկնատեսակը հատուկ է համարում Տիգրիս գետին և հաստատում այդպիսիների գոյությունը Տիգրիսում՝ նույնիսկ երկրորդ աշխարհամարտից առաջ²⁸: Արատտան համարվում է ջրհեղեղից փրկվածների հանգրվան²⁹: Այստեղ ակնհայտ կապ է նկատվում (ուղղակի, թե անուղղակի՝ միևնույն է) մի կողմից՝ դյուցազնավեպի շումերական և արքայական տարբերակների, մյուս կողմից՝ Կորճայքի Արարադա երկրի մասին Անանունի (Սեբ. գլ. Ա) և Մովսես խորենացու (Ա, գլ. 2, Ժ) տեղեկությունների միջև: Թ. Արատտան «սուրբ օրենքների երկիր», «անմահների երկիր»³⁰: «Սուրբ օրենքների երկիր» անվանումը կա նաև Մովսես խորենացու մոտ, երբ խոսում է Արարադա երկրում (նկատի ունի Կորճայք նահանգի Արարադը) Սեմ-Ջրուանի ինչ-որ ժամանակ հաստատվելու մասին: Ժ. Արատտան կամ նրան մերձակա լեռները կոչվում են «մայրիների լեռներ»³¹: Հայաստանի առանձին լեռները, այդ թվում Կորճայք (այժմ՝ Հաքլարի), այս համակարգում էլ Արարադ-Ջուդի-դաղը մայրիների անտառներով հարուստ են եղել: Ժ. Արատտայի իշխողները մոտ ազգակցական փոխադարձ կապ են ունեցել Շումերի իշխողների հետ:

Այսպիսի փոխհարաբերությունների շնորհիվ թագավորում նաև Արարադա երկրի և Շումերի միջև՝ ըստ խորենացու տեղեկությունների: Ժ. Դյուցազնավեպի արքայական տարբերակում («Գիլգամեշը և անմահների երկիրը» փեպերգում) հիշված է Նիցիր (Նիսիր) լեռը՝ որպես ջրհեղեղից փրկվածների հանգրվան, որպես անմահություն ստացածների հավաքատեղի³², Նվ քանի որ, ըստ նույն վիպերգի, «անմահների երկիրը» (= ջրհեղեղից փրկվածների) Արատտան է, ուրեմն՝ Նիցիր (Նիսիր) լեռը գտնվել է Արատտայում: Վերհիշենք նորից, որ ջրհեղեղից փրկվածների լեռ է համարվել նաև Կորճայք նահանգի Ներքին Կորդիք գավառի Արարադ-Նիբուր-Ջուդի-դաղը: Կարճ ասած՝ մի փաստ ևս հօգուտ Արարադ-Արատտա նույնության: Ավելին, Նիցիր (Նիսիր) լեռնանունը՝ իր դերով ու տեղով հուշում է նաև մեկ այլ իրողություն: Ինչպես տեսնենք, Սալմանասար Ա-ն «ուրուատրիների» նվաճումը նկարագրելուց անմիջապես հետո, բոլորովին անսպասելի, որպես նախորդ շարադրանքի ամփոփում, դրում է. «Այդ ժամանակ ես ողջ Սուցրա (Մուսրու) երկիրը խոնարհեցրի տիրոջս...»: Այսպիսով՝ Սալմանասարը Մուցրա (Մուսրու) է անվանել «ուրուատրիների երկիրը» և ոչ, ասենք, Նգիպտոսը (Մաքր) կամ Մուսասիր-Մուցածիրը: Ըստ այդմ, կարծում ենք, ոչ միայն տեղ ու դերով, այլև անվանական կապ կա Նիցիր (Նիսիր) լեռան և Մուցրա (Մուսրու) երկրի միջև՝ Նիցիր լեռնանունը, պարզապես, Մուցրա ձևով տրվել է միևնույն լեռներկրին (նմանաձայնության օրենք): Ժգ. Վերջապես, ավելորդ չհամարենք վերհիշել, որ «ուրուատրիների» 8 երկրամասերից 6-ր, ըստ գիտական տեղագրումների, գետեղվում են Կաղմեա տուն կամ Կորճայք նահանգի Արարադ լեռան շրջակայքում, այսինքն՝ նույնանուն երկրի տարածքում:

Արդ, վերոնշյալ բոլոր փաստերը կասկած չեն թողնում, որ Արարադը, Արատտան, «ուրուատրիների երկիրը» Հայկական լեռնաշխարհի միևնույն տարածքին տրված համարյա նույնական անվանումներ են և, բնականաբար, պետք է տեղադրվեն երեքին վերաբերող համահավաք բոլոր տեղեկություն-

26 Մ. Գավուքճյան, նշվ. աշխ., էջ 81, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 14—15:

27 Մ. Գավուքճյան, նշվ. աշխ., էջ 80, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 11—21:

28 Մ. Գավուքճյան, նշվ. աշխ., էջ 82:

29 Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 24—28:

30 Նույն տեղում, էջ 15—18, 24—28:

31 Նույն տեղում, էջ 10, 17—18:

32 Նույն տեղում, էջ 24—28:

ներով, որ պետք է խստագույնս նկատի առնվի տեղագրող ամեն ինչ, իսկ այդ համահավաքը, ինչպես տեսանք, հստակ ցույց է տալիս, որ Արարադ-Արատտա-Վարդանապատիների երկիրը գտնվել է Վանա լճից ուղիղ դեպի հարավ, Արևելյան Տիգրիսի կամ Զեռմ գետի և Արևելյան խաբուրի միջադեպում, Կադմեա տուն կամ Կորճալք նահանգի Արարադ լեռան շրջակայքում, անմիջապես սահմանակից Ասորեստանին, որ այդ երկիրը թուամե (Տումմե)-Տմորիք գավառն է, ավելի ուշ՝ ներքին Կորդրիքը՝ իր նշանավոր բերդ ամրոցներով, որ Սալմանասար Ա-ի ժամանակ այն ունեցել է ընդամենը 8 երկրամաս՝ 51 բնակավայրերով և մեկ բերդաքաղաք՝ Արինու անունով, որ այստեղից է սկսվել Տիգրիսի ճանապարհը դեպի Միջագետք (Արևմտյան և Արևելյան Տիգրիսների խառնումից) և այստեղով է անցել Միջագետք-Հայաստան ցամաքային ամենահռչակալ ճանապարհը (օրինակ, այս ճանապարհով է վերադարձել Հայկ Նահապետը, այստեղով է արշավել ներքովթ-Բելը, իսկ հետագայում՝ Նինոսը, Շամիրամը, Սալմանասար Ա-ը, Թիգլաթպալասար Ա-ը և ուրիշներ, այդ է Դարեհ Ա-ի «արքայական պողոտա»-ի մի հատվածը, այս ճանապարհով է հունական 10000-ոց զորքը նահանջել Հայաստան և այլն), Ահա այս է Արարադ-Արատտա-Վարդանապատիների երկիրը, մեր կարծիքով, Ուրարտու, կոչված պետության բնօրրանը, պետություն, որը հետագա դարերում այդ փոքրիկ երկրից ծավալվեց և ընդարձակ տարածքներ ընդգրկեց, Ավելին՝ առանձին դարերում Արարադ-Արատտա-Ուրարտուի (Վ)-Ուրարտու բնօրրանը նվաճվել է Ասորեստանի կողմից և «Ուրարտու» կոչված պետության մաս չի կազմել, Սա ես թյուրիմացությունների պատճառ է, սակայն այլ հարց է և այլ քննության կարոտ, Այնպես որ, Հայկական լեռնաշխարհի մեկ ուրիշ տարածքում «Ուրարտու»-ի բնօրրան փնտրելը, այդ թվում նաև՝ Վան քաղաքի շրջակայքում կամ էլ Արաքսի հովտում՝ Այրարատ-Արարատում, մեր կարծիքով, դատապարտվում է անհաջողության, Պարզապես, ինչպես տեսանք, փաստերը չեն նպաստում:

Մի հարց ևս Քննվող հոդվածի վերջում (էջ 101—102), երևի իր տեսակետը հիմնավորելու նպատակով, Մ. Կատվալյանը ապավինել է Արամ-Արամե անհիմն նույնացմանը և հանգել նույնքան անհիմն եզրակացությունների: Ամենաքննադատելիս այն է, որ նա ևս անտեսել է ժամանակի գործոնը և նկատի չի ունեցել, որ խորհնացու հիշած Արամը շուրջ 1200 տարի վաղ է իշխել (մ. թ. ա. 2036—1978), քան «ուրարտացի» Արամեն (մ. թ. ա. 860—845), որ Արամի գործերն Արամեին վերագրելը կոպտագույն սխալ է, Բացի այս, որևէ վերաբերմունք չի ցուցաբերված այդ մասին հրատարակած մեր հոդվածի նկատմամբ⁸³, Նթե գնանք նմանատիպ անտեսումների կամ անտեղյակության ուղիով, գիտությունը կդառնա զուտ կամայականությունների մրցասպարհ, որով կվտանգվի հենց ինքը՝ գիտությունը:

ПРАРОДИНА «УРАРТУ»

Л. П. ШАГИНЯН

Резюме

Наименование «Урарту» это ассирийское название страны *Арарад*, которая входила в состав губернии Корчайк (*Կոր-Ճալք*) или Дом Кадмеа (*Կադմեալ Տուն*) Большого Айка (*Մեծ ձալքի*), Прародиной «Урарту» является именно страна Арарад, упомянутая в древнешумерском эпосе как страна *Аратта*, в ассирийских клинописях — как страна *Тумме* (*Թումմե*), в армянских источниках — *Тморик* (*Տմորիք*) или *Нижний Кордик* (*Ներքին Կորդրիք*).

Так что искать прародину Арарад-Урарту на иной территории Армении — это бессмысленное занятие, противоречащее фактам.

⁸³ Արամ-Արամե նույնացման հարցի շուրջ (*Մանկավարժ*, 1990, № 11, էջ 19—35, 1991, № 5, էջ 29)։